ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Նորընտիր համայնքի ավագանու առաջին նիստին ներկա էին ավագանու բոլոր՝ 27 անդամները:

Համայնքապետարանի աշխատակազմի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ մարզային և համայնքային հիմնարկների ղեկավարներ,Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր-Տաճատ քահանա Ինջիղուլյանը, համայնքապետարանի աշխատակազմի և ԶԼՄ ներկայացուցիչներ,հյուրեր:

Նիստը վարում էր տարիքով ավագ ավագանու անդամ **Ստեփան Նազարյանը**

Նիստն արձանագրում էր ՝ Ֆ.Պետրոսյանը

Նիստը վարող Ս.Նազարյանը մինչ օրակարգային հարցերին անցնելը նշեց որ 2021 թվականի դեկտեմբերի 5-ին տեղի ունցած Արմավիր խոշորացված համայնքի ՏԻՄ ընտրություններին մասնակցել է միայն քաղաքական մեկ ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որի արդյունքում ավագանու ցուցակը գլխավորող Դավիթ Խուդաթյանն օրենքի ուժով ընտրվել է Արմավիր համայնքի ղեկավար: Նիստը վարողը ներկայացրեց ավագանու անդամներին՝ Հայկ Աբգարյան, Կարեն Աղախանյան, Արտակ Արոյան, Հայկ Բարսեղյան, Լուսինե Գալոյան, Թամարա Գրիգորյան, Լուսինե Գրիգորյան, Հայկ Դոլինյան, Նարինե Իսկանդարյան, Արշակ Կարապետյան, Արմեն Հակոբյան, Խաչիկ Հարությունյան, Դավիթ Հովհաննիսյան, Արմինե Ղազարյան, Սուսաննա Մատինյան, Հարություն Մարգարյան, Ռոման Մարգարյան, Հայկ Մելեքյան, Արմինե Մկրտչյան, Հերիքնազ Մկրտչյան, Աստղիկ Մնացականյան, Ստեփան Նազարյան, Մամիկոն Շահինյան, Արմեն Շիրվանյան, Վարշամ Սարգսյան, Էդգար Ստեփանյան:

Այնուհետև Ս. Նազարյանը ներկայացրեց նորընտիր ավագանու առաջին նիստի 3 հարցից բաղկացած օրակարգի նախագիծը,որը հաստատվեց կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքով (որոշումը կցվում է):

Օրակարգի 2-րդ հարցը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օր սահմանելու մասին ներկայացրեց Ս.Նազարյանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով Արմավիր համայնքի ավագանին կողմ՝ 27, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 քվեարկության արդյունքով ընդունեց համապատասխան որոշում (կցվում է):

Օրակարգի 3-րդ հարցի հետ կապված Ս.Նազարյանը ամբիոնի մոտ հրավիրեց Արմավիր խոշորացված համայնքի ղեկավար Դավիթ Խուդաթյանին և տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հանդիսավոր երդման արարողությունը (ստորագրված տեքստը կցվում է):Այնուհետև հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը, որից հետո Դավիթ Խուդաթյանը հանդես եկավ ելույթով:Նա մասնավորապես նշեց, որ մեր ժողովրդի համար բախտորոշ ու ճակատագրական Սարդարապատի հերոսամարտը հավերժացնող հուշահամալիրը, որը գտնվում է Արմավիր խոշորացված համայանքի վարչական տարածքում իր խորհրդանշական ուժով նորընտիր ավագանուն բերել է այստեղ անցկացնելու 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրություններում ընտրված Արմավիր խոշորացված համայնքի ավագանու առաջին նիստը:Նա նշեց որ պարտավորեցնող է այս սրբազան վայրից սկսելու նոր աշխատանքների մեկնարկը, որոնք առաջիկա հինգ տարիների համար լինելու են բեղմնավոր, միտված նորաստեղծ համայնքի բազմակողմանի զարգացմանն ու առաջընթացին:

Դավիթ Խուդաթյանի ելույթից հետո օրհնանքի և բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու հոգևոր հովիվ՝ Տեր-Տաճատ քահանա Ինջիղուլյանը:

Ս.Նազարյանը նիստը հայտարարեց փակված:

Ավագանու անդամներ՝

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՀԱՅԿ ԱԲԳԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՂԱԽԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ԱՐՈՅԱՆ

ՀԱՅԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳԱԼՈՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԴՈԼԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԱՐՇԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԽԱՉԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՏԻՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՌՈՄԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԿ ՄԵԼԵՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԵՐԻՔՆԱԶ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ՄԱՄԻԿՈՆ ՇԱՀԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՇԻՐՎԱՆՅԱՆ

ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ

ԷԴԳԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Նիստը վարող՝- - - - - - - - Ս.Նազարյան

Նիստն արձանագրեց՝ Ֆ. Պետրոսյանը